

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՊԱՇՏՈՆԸ «Նոյեմբերյան» մասնաճյուղի Դրամարկղային գործառնությունների մասնագետ
ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ Լրիվ աշխատաժամանակ
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ Անորոշ ժամկետով
ՎԱՅՐԸ ՀՀ, Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Նոյեմբերյան» մասնաճյուղի Դրամարկղային գործառնությունների մասնագետի պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառնությունները ներառում են դրամարկղային գործառնությունների ժամանակին և պատշաճ կատարումը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Դրամարկղային գործառնությունների իրականացում, կանխիկ արժույթի, արտարժույթի և այլ արժեքների ընդունում և տրամադրում /կանխիկ ելք, մուտք/,
- Կանխիկ արժույթի առքի ու վաճառքի իրականացում, համապատասխան օրդերների ձևակերպում,
- Դրամարկղային գործառնությունների հետ կապված հաշվեկշռային գործառնությունների ձևակերպում,
- Մասնաճյուղի կողմից իրականացված եկամտային և ծախսային օրդերների սպասարկում,
- Կանխիկ դրամական միջոցների ինկասացիա,
- Ինկասացիոն կազմակերպության կողմից դրամական միջոցների ընդունման և հանձնման ակտերի պատրաստում,
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- բարձրագույն կրթությունը ցանկալի է,
- տվյալ պաշտոնում աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ,
- հաշվեկշռային հաշիվների, փաստաթղթաշրջանառության կազմակերպման և սկզբնական փաստաթղթերի հիման վրա դրանց ձևակերպման ու պահպանման իմացություն,
- բարձր կազմակերպվածություն, մանրամասների նկատմամբ ուշադրություն,

- ճշգրիտ և արագ մուտքագրելու հմտություն և լայնածավալ տվյալների մուտքագրման կարողություն,
- սահմանված ժամկետներում աշխատանքն ավարտելու ունակություն,
- մարդկանց հետ հաղորդակցվելու հմտություններ:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Նոյեմբերյան 4101, Նոյեմբերի 29 փ., 1/2 կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝

22 Նոյեմբերի 2021

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝

06 Դեկտեմբերի 2021